ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 6, 1951 *Общественные науки*

ԼՐԱՏՈՒ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ, ՆՎԻՐՎԱԾ Ի. Վ. ՍՏԱԼԻՆԻ «ՄԱՐՔՍԻԶՄԸ ԵՎ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ

Հունիսի 20—22-ին տեղի ունեցավ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Հասարակական գիտությունների բաժանմունքի ընդհանուր ժողովը՝ նվիրված Ի. Վ. Ստալինի «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը» հանճարեղ աշխատության հրապարակման առաջին տարեդարձին։

Ժողովը բաց արեց Հայկական ՍՍՌ ԴԱ վիցե-պրեզիդենտ, ակադեմիայի իսկական անդամ Մ. Ներսիսյանը, որից հետո «Ի. Վ. Ստալինի լեզվաբանական ուսմունքը և սովետական լեզվաբանության խնդիրները» թեմայով զեկուցեց Հայկական ՍՍՌ ԴԱ իսկական անդամ Գ. Դափանցյանը։ Այդ օրվա երկրորդ զեկուցումը կարդաց փիլ. գիտ. թեկնածու Խ. Մոմջյանը «Ի. Վ. Ստալինի լեզվաբանական աշխատությունների նշանակությունը մարքս-լենինյան փիլիսոփայության զարգացման համար» թեմայով։ Հունիսի 21-ի նիստում զեկուցեցին պատմ. գիտ. թեկնածու Ս. Երեմյանը «Հայերի էթնոգենեզիսի պրոբլեմը Ի. Վ. Ստալինի լեզվաբանական աշխատությունների լույսի տակ» թեմայով, ֆիլ. գիտ. դոկտոր Սեվակը «Լեզվի և մտածողության հարցի մասին, Ի. Վ. Ստալինի լեզվաբանական ուսմունքի լույսի տակ» թեմայով և ֆիլ. գիտ. թեկնածու Է. Թոփչյանը «Ի. Վ. Ստալինի լեզվաբանական ուսմունքը և գրականագիտության հարցերը» թեմայով։

Հունիսի 22-ի նիստում զեկուցեց տնտ. գիտ. թեկնածու Ս. Զուրաբյանը հետևյալ թեմայով՝ «Ի. Վ. Ստալինի «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը» աշխատությունը և քաղաքատնտեսության խնդիրները»։ Նույն օրը պատմ. գիտ. թեկնածու Բ. Առաքելյանը զեկուցեց «Հնագիտության հարցերը Ի. Վ. Ստալինի լեզվաբանական ուսմունքի լույսի տակ» թեմայով, ֆիլ. գիտ. թեկնածու Ա. Ղանալանյանը՝ «Ի. Վ. Ստալինի լեզվաբանության վերաբերյալ աշխատությունները և ֆոլկլորի խնդիրները» թեմայով։

Ի. Վ. ՍՏԱԼԻՆԻ «ՄԱՐՔՍԻԶՄԸ ԵՎ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ» ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍՈՎԵՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հունիսի 13—14-ին տեղի ունեցավ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտի Գիտական խորհրդի ընդլայնած նիստը, նվիրված սովետական գրականագիտության խնդիրներին։

«Գրականագիտության հարցերը Ի. Վ. Ստալինի լեզվաբանական աշխատությունների լույսի տակ» թեմայով զեկուցեց Մ. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտի դիրեկտոր, ֆիլոլոգիական գիտությունների դոկտոր Մ. Մկրյանը։

Զեկուցողը նշեց Ի. Վ. Ստալինի լեզվաբանական աշխատությունների անգնահատելի նշանակությունը գրականության տեսության և պատմության հիմնական հարցերի, հատկապես գրականության սպեցիֆիկումի խորը ըմբռնման գործում։

Բազիսի և վերնաշենքի ստալինյան կլասիկ բնութագրումները,— ասում է զեկուցողը,— մեզ հիանալի պատկերացում են տալիս գրականության որպես վերնաշենքային երևույթի առանձնահատկությունների մասին։